Թվային քարտի քարտապանների համար խաղարկության անցկացման և մասնակցության կանոններ

1. Mastercard-ի հետ համատեղ անցկացվող արշավին կարող են մասնակցել Բիբլոս Բանկ Արմենիայի թվային քարտ (Mastercard Digital) ունեցող բոլոր քարտապանները:

2. Հաղթող ճանաչված 15 հաճախորդ կստանա ներքոնշյալ նվերներից մեկը՝

I. 5 հատ Apple Watch SE GPS (2-րդ սերնդի)
II. 5 հատ APPLE AirPods Pro 2
III. 5 հատ iPhone 16 Pro (256 GB)

3. Ակցիայի շրջանակում հաղթողները կորոշվեն ուղիղ եթերում անցկացվող խաղարկության ընթացքում պատահականության սկզբունքով, որը կկազմակերպվի McCann Erickson գովազդային ընկերության կողմից:

4. Խաղարկությանը կարող են մասնակցել Mastercard Digital քարտապան հանդիսացող այն հաճախորդները, որոնք նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրենց Mastercard Digital քարտով կկատարեն 3 կամ ավելի անկանխիկ վճարում՝ ընդհանուր առմամբ 50,000 ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ) և ավելի գումարի չափով POS և ePOS տերմինալներով:

5. Ակցիայի շրջանակում վճարային գործարք կհամարվի քարտով առևտրի սպասարկման կետերում կատարված վճարումները՝ բացառությամբ հեռախաղորդակցման ծառայությունների, կոմունալ վճարումների, էլեկտրոնային փողերի, պետական մարմիններին վճարումների (ինչպիսիք են՝ հարկեր, տուրքեր և այլ վճարումներ), բարեգործական հանգանակությունների, գործարքների, որոնց գծով կատարվել է գործարքի հետվերադարձ, խաղադրույքների, բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների, քարտից քարտ փոխանցվող գումարների դիմաց կատարված վճարումների:

6. Խաղարկության մասնակից չեն կարող հանդիսանալ.

- Ակցիայի ընթացքում Բիբլոս Բանկ Արմենիայի գործող աշխատակիցները
- 18 (տասնութ) տարին չլրացած հաճախորդները
- Մինչև ակցիայի ավարտը փակված Mastercard Digital քարտերի քարտապանները

7. Արդյունքներն ամփոփվելու են 2025 թ. հունվարի սկզբին Բանկի պաշտոնական ֆեյսբուքյան էջում ուղիղ հեռարձակման միջոցով:

8. Խաղարկության հստակ օրվա և ժամի մասին հավելյալ կհայտարարվի Բանկի պաշտոնական ֆեյսբուքյան էջում:

9. Հաղթող կճանաչվեն այն հաճախորդներ, որոնց անուն-ազգանունները պատակահանության սկզբունքով դուրս կբերվեն խաղարկության ընթացքում, և այդ պահին կհրապարակվեն

հաղթող ճանաչված մասնակիցների քարտի վերջին երեք նիշն ու անուն-ազգանվան առաջին տառերը:

10. Խաղարկության ընթացքում նվերները կխաղարկվեն հետևյալ հերթականությամբ՝

I. 5 հատ APPLE AirPods Pro 2
II. 5 հատ Apple Watch SE GPS (2-րդ սերնդի)
III. 5 հատ iPhone 16 Pro (256 GB)

11. Հաղթող ճանաչված հաճախորդների տվյալները կհրապարակվեն Բիբլոս Բանկ Արմենիայի ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերում:

12. Նվերները հաղթող մասնակիցներին կտրամադրվեն գովազդային ընկերության կողմից կազմակերպված միջոցառման ընթացքում, որի անցկացման ժամի ու վայրի մասին բոլոր հաղթողները կտեղեկացվեն նախապես՝ Բանկում առկա կոնտակտային տվյալների միջոցով: Բոլոր հաղթող մասնակիցները մրցանակը ստանալու համար միջոցառմանը պետք է ներկայանան անձը հաստատող փաստաթղթով: Միջոցառման անցկացումը նկարահանվելու է գովազդային ընկերության կողմից: Միջոցառմանը հարգելի պատճառով ներկա գտնվել չկարողացող մասնակիցները մրցանակը ստանալու համար անձը հաստատող փաստաթղթով պետք է մոտենան Բիբլոս Բանկ Արմենիայի գլխամասային գրասենյակ (հասցե՝ ք.Երևան, Ամիրյան 18/3):

13. Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ պաշտոնապես հրապարակելուց հետո:

14. Հրապարակված պայմանների հայերեն և անգլերեն տարբերակների միջև անհամապատասխանությունների դեպքում հիմք է ընդունվում հայերեն տարբերակը: